Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 22 փետրվարի 2022թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ Բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն Բանկի Խորհրդի թիվ 1/07-04.01.22թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. հունվարի 23-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,897,938 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,507,875 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 79.45%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր է ճանաչվել 1 քվեաթերթիկ 18 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատում՝ Բանկի բաժնետոմսերի 19-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով Բանկի կանոնադրական կապիտալը 26,652,068,000 ՀՀ դրամ կազմելու վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	1,491,618 ձայն կամ մասնակիցների ձայների	98.922%
	դեմ	16,239 ձայն կամ մասնակիցների ձայների	1.077%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	18 ձայն կամ մասնակիցների ձայների	0.001%
2. Երկրորդ հարց	կողմ	1,491,618 ձայն կամ մասնակիցների ձայների	98.922%
	դեմ	16,239 ձայն կամ մասնակիցների ձայների	1.077%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	18 ձայն կամ մասնակիցների ձայների	0.001%

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան

2. Հաստատել Բանկի նոր խմբագրությամբ Կանոնադրությունը. Բանկի բաժնետոմսերի 19-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 26,652,068,000 ՀՀ դրամ:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Ա. Աղամյան

Ե. Ալեքսանյան